



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՂ ՏԱՐԻ 26(417) «06» դեկտեմբերի 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՐՈՂ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ		
586	«Մասնակի գորացրում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-641-Ն հրամանագիրը	3
587	«Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի հուլիսի 4-ի ՆՀ-79-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-822-Ն հրամանագիրը	4
ՅՈԹԵՐՈՂ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
588	«Արցախի Հանրապետության բնակչության կոմունալ ծառայությունների փոխհատուցման աջակցության միջոցառումը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 626-Ն որոշումը	11
589	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի N 556 որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 628-Ն որոշումը	13
590	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 29-ի N 23-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 629-Ն որոշումը	14
ԻՆՆԵՐՈՂ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
591	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 46Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 57-Ա որոշումը	16
592	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող	

	պետական հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 57-Ս որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 58-Ս որոշումը	18
	ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ	
593	«Արցախի Հանրապետության տարածքում որսի կենդանիների 2020-2021 թվականների սիրողական որսի համար թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները սահմանելու մասին» ԱՀ բնապահպանության կոմիտեի նախագահի N 116-Ն հրամանը	20

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՄԱՍՆԱԿԻ ԶՈՐԱՑՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 131-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Կատարել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված զորահավաքային զորակոչի շրջանակներում զինվորական ծառայության կանչված քաղաքացիների մասնակի զորացրում:

2. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ ելնելով զինված ուժերի խնդիրներից՝ ապահովել սույն հրամանագրի կատարումը:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ անմիջապես:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 25
Ստեփանակերտ
ՆՀ-641-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի ՆՀ-79-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի հունիսի 4-ի «Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ՆՀ-79-Ն հրամանագրում (այսուհետ՝ հրամանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանագրի նախաբանում «2020 թվականի հունիսի 26-ի ՆՀ-67-ՆԳ» բառերը փոխարինել «2020 թվականի դեկտեմբերի 5-ի ՆՀ-821-ՆԳ» բառերով.

2) հրամանագրի 2-րդ կետով հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն N 1 հավելվածի.

3) հրամանագրի 3-րդ կետով հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 5
Մտեփանակերտ
ՆՀ-822-Ն

Հավելված N 1
Արցախի Հանրապետության Նախագահի
2020 թվականի դեկտեմբերի 5-ի
ՆՀ-822-Ն հրամանագրի

«Հավելված N 1
Արցախի Հանրապետության Նախագահի
2020 թվականի հուլիսի 4-ի ՆՀ-79-Ն
հրամանագրի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՄԵՆՅԱԿԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակը (այսուհետ՝ գրասենյակ) ապահովում է Անվտանգության խորհրդի և Անվտանգության խորհրդի քարտուղարի բնականոն գործունեությունը:

2. Գրասենյակի հիմնադիրը Արցախի Հանրապետության Նախագահն է:

3. Գրասենյակը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, ամրացված գույք և իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

4. Գրասենյակի կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Արցախի Հանրապետության Նախագահը:

5. Գրասենյակի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Արցախի Հանրապետությունը:

6. Գրասենյակը գործում է Արցախի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

7. Գրասենյակի անվանումն է՝

1) հայերեն՝ Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակ.

2) ռուսերեն՝ Аппарат Совета безопасности Республики Арцах.

3) անգլերեն՝ Office of the Security Council of the Artsakh Republic.

4) ֆրանսերեն՝ Bureau du Conseil de securite de la Republique d Artsakh:

8. Գրասենյակն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր: Գրասենյակը կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

9. Գրասենյակի գործունեության իրավական, կադրային, ֆինանսական, փաստաթղթային, նյութատեխնիկական ապահովումը և սպասարկումն իրականացվում է գրասենյակի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից:

10. Գրասենյակի գտնվելու վայրն է՝ ք. Ստեփանակերտ, Փետրվարի 20-ի փողոց, N 1:

**2. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՄԵՆՑԱԿԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

11. Գրասենյակի խնդիրներն են Անվտանգության խորհրդի և Անվտանգության խորհրդի քարտուղարի գործառույթների իրականացմանն ուղղված համապատասխան աշխատանքների կազմակերպումը:

12. Անվտանգության խորհրդի գրասենյակը՝

1) ապահովում է Անվտանգության խորհրդի քարտուղարի կողմից՝

ա. Անվտանգության խորհրդի նիստերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը,

բ. Անվտանգության խորհրդի աշխատակարգով սահմանված կարգով Արցախի Հանրապետության անվտանգության սպառնալիքներին վերաբերող տեղեկատվության հավաքումը և ամփոփումը, տեղեկատվական ամփոփագրերի, ինչպես նաև ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ առաջարկությունների մշակումը,

գ. Անվտանգության խորհրդի որոշումների կատարման մշտադիտարկման իրականացումը և Անվտանգության խորհրդի որոշումների կատարման վերաբերյալ հաշվետվությունների կազմումը,

դ. Անվտանգության խորհրդի հանձնախմբերին և աշխատանքային խմբերին տրված հանձնարարականների կատարման վերահսկումը,

ե. Անվտանգության խորհրդի որոշումների նախագծերի համաձայնեցումն Անվտանգության խորհրդի անդամների հետ.

2) ապահովում է՝

ա. Արցախի Հանրապետության նախագահի կողմից Անվտանգության խորհրդի քարտուղարին տրված առանձին հանձնարարականների կատարումը,

բ. Անվտանգության խորհրդի գործունեության տարեկան ծրագրի մշակումը,

գ. Անվտանգության խորհրդի նիստերի արձանագրումը,

դ. Արցախի Հանրապետության նախագահի կողմից Անվտանգության խորհրդի նիստին հրավիրված անձանց մասնակցությունը,

ե. Անվտանգության խորհրդի որոշումների նախագծերի նախապատրաստումը.

3) կատարում է Անվտանգության խորհրդի քարտուղարի ցուցումներն ու հանձնարարականները.

4) մասնակցում է Անվտանգության խորհրդի նիստում քննարկված հարցերի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրության պատրաստմանը և լուսաբանմանը.

5) պահպանում է Անվտանգության խորհրդի գործունեության վերաբերյալ փաստաթղթերը և այլ նյութեր:

3. ԳՐԱՄԵՆՑԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Գրասենյակը կառավարում է Անվտանգության խորհրդի քարտուղարը:

14. Անվտանգության խորհրդի քարտուղարը ունի տեղակալ (տեղակալներ), որոնց Խորհրդի քարտուղարի ներկայացմամբ պաշտոնի է նշանակում և ազատում Արցախի Հանրապետության Նախագահը:

15. Անվտանգության Խորհրդի քարտուղարը օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում է Անվտանգության խորհրդի գրասենյակի՝ Արցախի Հանրապետության Նախագահի կողմից չնշանակվող հանրային ծառայողներին:

16. Գրասենյակի գործունեությունն անմիջականորեն ղեկավարում և վերահսկում է Անվտանգության խորհրդի քարտուղարը, որին նշանակում և ազատում է Արցախի Հանրապետության Նախագահը:

17. Անվտանգության խորհրդի քարտուղարն անմիջականորեն ղեկավարում և վերահսկում է նաև հանրային ծառայող չհանդիսացող՝ Անվտանգության խորհրդի աշխատանքներում պայմանագրային հիմունքներով ներգրավված անձանց գործունեությունը:

18. Գրասենյակի ընթացիկ գործունեությունն ապահովում է գրասենյակի ղեկավարը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Անվտանգության խորհրդի քարտուղարը:

19. Գրասենյակի ղեկավարը հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին և Անվտանգության խորհրդի քարտուղարին:

20. Գրասենյակի ղեկավարը՝

1) համակարգում է գրասենյակի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը.

2) պատասխանատու է գրասենյակի գործառույթների իրականացման համար.

3) վարում է գրասենյակի պաշտոնական փոստը.

4) Անվտանգության խորհրդի քարտուղարի հաստատմանն է ներկայացնում գրասենյակի գործավարության կարգը.

5) Անվտանգության խորհրդի քարտուղարի հանձնարարությամբ ներկայացնում է գրասենյակն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ փոխհարաբերություններում, իր իրավասության սահմաններում հանդես է գալիս գրասենյակի անունից.

6) Անվտանգության խորհրդի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է պետական մարմինների կողմից անցկացվող նիստերին և խորհրդակցություններին.

7) համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

8) Անվտանգության խորհրդի քարտուղարին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն գրասենյակի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին.

9) ապահովում է Անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդակցությունների և հանդիպումների, այդ թվում՝ արտագնա, արձանագրությունների նախապատրաստումը.

10) ապահովում է Անվտանգության խորհրդի քարտուղարի ցուցումների ու հանձնարարականների կատարումը:

4. ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

21. Գրասենյակի կառուցվածքում ընդգրկվում են՝

1) Անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալը (տեղակալները), գրասենյակի ղեկավարը, Անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականը (խորհրդականները), մամուլի քարտուղարը, օգնականը (օգնականները), գրասենյակի ղեկավարի օգնականը.

2) գրասենյակի կառուցվածքային ստորաբաժանումները:

5. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԸ, ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ, ՕԳՆԱԿԱՆԸ ԵՎ ՄԱՍՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

22. Անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալն իրականացնում է քարտուղարի կողմից իրեն վերապահված լիազորությունները:

23. Անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականին, օգնականին և մամուլի քարտուղարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Անվտանգության խորհրդի քարտուղարը:

24. Անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականի և օգնականի գործունեության ուղղությունները, ինչպես նաև նրանց պարտականությունների բաշխումը սահմանում է Անվտանգության խորհրդի քարտուղարը:

25. Անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականը՝

1) «Հանրային ծառայության մասին» Արցախի Հանրապետության օրենքով ունի պաշտոնի անձնագիր.

2) կազմում է իր աշխատանքային ծրագիրը և ներկայացնում Անվտանգության խորհրդի քարտուղարի հավանությանը.

3) իրականացնում է Անվտանգության խորհրդի քարտուղարի կողմից իրեն հանձնարարված ոլորտի ուսումնասիրություն, պարզում է ոլորտի զարգացման միտումները, վերհանում առկա հիմնահարցերը և առաջարկություններ է ներկայացնում Անվտանգության խորհրդի քարտուղարին դրանց լուծման ուղղությամբ:

4) պարբերաբար Անվտանգության խորհրդի քարտուղարին է ներկայացնում իրեն հանձնարարված ոլորտին վերաբերող վերլուծական-խորհրդատվական նյութեր:

5) Անվտանգության խորհրդի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում իր գործառույթներին վերաբերող հարցերի քննարկմանը:

6) վերլուծում է Անվտանգության խորհրդի քարտուղարի կողմից իրեն մակագրված փոստը և ամփոփ տեղեկատվություն ներկայացնում Անվտանգության խորհրդի քարտուղարին:

7) գրասենյակի ստորաբաժանումներից կարող է ստանալ նյութեր:

8) մասնակցում է իրեն հանձնարարված բնագավառին առնչվող՝ Անվտանգության խորհրդի քարտուղարի այցերի, զրույցների, բանակցությունների, խորհրդակցությունների, հանդիպումների փաթեթների պատրաստմանը:

9) առաջարկություններ է ներկայացնում Անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի քարտուղարին՝ Անվտանգության խորհրդի քարտուղարի էլոյթների, ուղերձների և նամակների նախագծերի, ինչպես նաև նրա անունից կազմվող այլ փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ:

10) կատարում է Անվտանգության խորհրդի քարտուղարի այլ հանձնարարականները:

26. Անվտանգության խորհրդի քարտուղարի օգնականը՝

1) Անվտանգության խորհրդի քարտուղարի կողմից սահմանված պարբերականությամբ ամփոփ տեղեկատվություն է ներկայացնում Անվտանգության խորհրդի քարտուղարին իրեն հանձնարարված ոլորտում առկա իրավիճակի, արդի հիմնահարցերի վերաբերյալ և առաջարկություններ է ներկայացնում Անվտանգության խորհրդի քարտուղարին դրանց լուծման վերաբերյալ:

2) Անվտանգության խորհրդի քարտուղարի հանձնարարությամբ, համագործակցելով գրասենյակի ստորաբաժանումների աշխատողների հետ, Անվտանգության խորհրդի քարտուղարի համար նախապատրաստում է անհրաժեշտ տեղեկատվական նյութեր:

3) մասնակցում է իրեն հանձնարարված բնագավառին առնչվող՝ Անվտանգության խորհրդի քարտուղարի այցերի, զրույցների, բանակցությունների, խորհրդակցությունների, հանդիպումների և ուղևորությունների կազմակերպչական նախապատրաստմանը:

4) իր գործառույթներն իրականացնելիս համագործակցում է իրեն հանձնարարված բնագավառում գործող պետական կառավարման համակարգի մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև փորձագետների հետ:

5) վերլուծում է Անվտանգության խորհրդի քարտուղարի կողմից իրեն մակագրված փոստը և ամփոփ տեղեկատվություն ներկայացնում Անվտանգության խորհրդի քարտուղարին:

6) կատարում է Անվտանգության խորհրդի քարտուղարի առանձին հանձնարարականներ:

27. Անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի քարտուղարը՝

1) ներկայացնում է Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնական տեսակետները Արցախի Հանրապետության և օտարերկրյա պետությունների տեղեկատվության միջոցներին:

2) կազմակերպում է Անվտանգության խորհրդի քարտուղարի հարցազրույցները, ասուլիսները և հանդիպումները լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ:

3) Անվտանգության խորհրդի քարտուղարին առաջարկություններ է ներկայացնում նրա հրապարակային էլոյթների վերաբերյալ, դրանք կազմելիս

համագործակցում Անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականների և գրասենյակի այլ աշխատողների հետ.

4) Անվտանգության խորհրդի քարտուղարի հանձնարարությամբ հանդես է գալիս հայտարարություններով, պարզաբանումներով, հերքումներով.

5) լուսաբանում է Անվտանգության խորհրդի քարտուղարի և գրասենյակի գործունեությունը և դրա վերաբերյալ պատրաստում է մամուլի հաղորդագրություններ.

6) վարում է Անվտանգության խորհրդի պաշտոնական կայքը:

6. ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

28. Գրասենյակի կառուցվածքային ստորաբաժանումներն են վարչությունները և բաժինները:

29. Գրասենյակի կառուցվածքային ստորաբաժանումները գործում են ստորաբաժանման ղեկավարի անմիջական ղեկավարությամբ:

30. Վարչությունների կազմում ստեղծվում են կառուցվածքային ստորաբաժանումներ՝ բաժիններ:

31. Գրասենյակի կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

32. Գրասենյակի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները քարտուղարի կարգադրությամբ կարող են հանդես գալ որպես ոլորտային միջգերատեսչական հանձնախմբերի անդամներ, իսկ մասնագետները՝ աշխատանքային խմբերի անդամներ:

7. ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԳՈՒՅՔԸ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

33. Գրասենյակի գույքը ձևավորվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

34. Գրասենյակի գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառում վարելու, աշխատակազմի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

35. Գրասենյակն իրավունք ունի Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան, օգտագործել, տիրապետել և տնօրինել իրեն հանձնված գույքը (գույքային իրավունքները):

36. Գրասենյակի պահպանման ծախսերն ամբողջությամբ ֆինանսավորվում են Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից: Գրասենյակը կարող է նաև ֆինանսավորվել օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներից:

37. Գրասենյակն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Գրասենյակի պահպանման կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով:

38. Գրասենյակը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և իրավասու պետական մարմիններին ներկայացնում է համապատասխան հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Կ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության Նախագահի
2020 թվականի դեկտեմբերի 5-ի
ՆՀ-822-Ն հրամանագրի

«Հավելված N 2
Արցախի Հանրապետության Նախագահի
2020 թվականի հուլիսի 4-ի ՆՀ-79-Ն
հրամանագրի

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳՐԱՄԵՆՑԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

1. Անվտանգային քաղաքականության և հիմնարար փաստաթղթերի վարչություն՝
 - 1) պաշտպանական քաղաքականության և ռազմավարական առաջնորդող փաստաթղթերի քաղաքականության բաժին.
 - 2) պետական, հասարակական անվտանգության բաժին:
 2. Ռազմական անվտանգության վարչություն՝
 - 1) ռազմաքաղաքական համագործակցության բաժին.
 - 2) քաղաքացիական պաշտպանության և զորահավաքային ծրագրերի բաժին:
 3. Քաղաքական, սոցիալական և տնտեսական անվտանգության վարչություն՝
 - 1) սոցիալ-տնտեսական քաղաքականության բաժին.
 - 2) սփյուռքի հարցերով բաժին:
 4. Տեղեկատվական բաժին
 5. Քարտուղարություն
 6. Հաշվապահական հաշվառման բաժին»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Կ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 դեկտեմբերի 2020թ.

N 626-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԱԼ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 82-րդ և 93-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության բնակչության կոմունալ ծառայությունների փոխհատուցման աջակցության միջոցառումը՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը՝ կազմակերպել միջոցառման իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի դեկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՍՈՒՆԱԼ
ՄԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Արցախի Հանրապետության բնակչության կոմունալ ծառայությունների փոխհատուցման աջակցության միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) նպատակն է աջակցել Ադրբեյջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով սոցիալական խնդիրների առջև կանգնած Արցախի Հանրապետության բնակչությանը:

2. Միջոցառման շահառու են բնական գազի մատակարարման, էլեկտրական էներգիայի մատակարարման, բջջային և ինտերնետ կապի պայմանագիր կնքած Արցախի բնակիչ-բաժանորդները:

3. Աջակցությունը (փոխհատուցման ենթակա) տրամադրվում է 2020 թվականի դեկտեմբեր ամսվա և 2021 թվականի բոլոր ամիսների համար:

4. Մեկ բնակիչ-բաժանորդի համար 2020 թվականի դեկտեմբեր ամսվա և 2021 թվականի համար աջակցության առավելագույն չափը սահմանվում է հետևյալ կերպ.

1) Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքում մատուցվող բջջային կապի ծառայությունների գծով՝ մինչև **180** ռուպե և մինչև **50** հատ SMS հաղորդագրություն.

2) ինտերնետ կապի ծառայության գծով՝ մինչև **1** Մբ/վրկ արագություն.

3) 2020 թվականի դեկտեմբեր և 2021 թվականի հունվար, փետրվար, մարտ և դեկտեմբեր ամիսների համար՝

ա. բնական գազի սպառման գծով՝ մինչև **180** խմ ներառյալ, իսկ չգազիֆիկացված բնակելի տան կամ բնակարանի էլեկտրական էներգիայի սպառող բնակիչ-բաժանորդների համար 15000 ՀՀ դրամի չափով,

բ. էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ մինչև **500** կվտ/ժ ներառյալ.

4) 2021 թվականի ապրիլ, մայիս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների համար՝

ա. բնական գազի սպառման գծով՝ մինչև **120** խմ ներառյալ, իսկ չգազիֆիկացված բնակելի տան կամ բնակարանի էլեկտրական էներգիայի սպառող բնակիչ-բաժանորդների համար 10000 ՀՀ դրամի չափով,

բ. էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ մինչև **400** կվտ/ժ ներառյալ.

5) 2021 թվականի հունիս, հուլիս և օգոստոս ամիսների համար՝

ա. բնական գազի սպառման գծով՝ մինչև **60** խմ ներառյալ, իսկ չգազիֆիկացված բնակելի տան կամ բնակարանի էլեկտրական էներգիայի սպառող բնակիչ-բաժանորդների համար 5000 ՀՀ դրամի չափով,

բ. էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ մինչև **300** կվտ/ժ ներառյալ:

5. Սույն միջոցառման 4-րդ կետի համաձայն որոշված սահմանաչափի ընդհանուր գումարները փոխանցվում են մատակարարող ընկերություններին միջոցառման շահառու համարվող բնակիչ բաժանորդների կողմից սպառված ծառայությունների ծավալների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելուց հետո՝ Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից սահմանված կարգով և ձևով:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա.ԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 դեկտեմբերի 2020թ.

N 628-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 556 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **նր նշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N 556 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետից հետո լրացնել նոր 1.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«1.1. Արցախի Հանրապետությունում հաշվառված՝ կենսաթոշակի անցնելու կապակցությամբ պահեստ արձակված զինձառայողների, Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և նրանց հավասարեցված ու Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցած անձանց բժշկական օգնությունն ու սպասարկումն Արցախի Հանրապետությունում իրականացնել անվճար հիմունքներով՝ Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:».

2) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ և 3-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 դեկտեմբերի 2020թ.

N 629-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 23-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա թ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 29-ի «Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից որոշ հիվանդություններով տառապող Արցախի Հանրապետության քաղաքացիներին դրամական օգնություն տրամադրելու կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 14-ի N 61 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 23-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) բոլոր քաղաքացիների՝

ա. բացառությամբ սույն կետի 2-րդ ենթակետում նշված անձանցից, սրտի վիրահատությունների, կորոնար անոթների ստենոտավորման, աորտայի անևրիզմանների պատվածքների և շերտազատումների վիրահատությունների, սրտի ռիթմը վարող սարքի իմպլանտացիայի, կարդիոկլերեր-դեֆիբրիլատորի իմպլանտացիայի, աբլացիայի, Սիներակի (Վ.Կավա/V.Cava) ֆիլտրի տեղադրման անհրաժեշտ գումարի 50 տոկոսը, որը չպետք է գերազանցի 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գումարը,

բ. նյարդավիրաբուժական հիվանդությունների ժամանակ էնդովասկուլյար ռեկոնստրուկտիվ բուժման, նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ օգտագործվող շունտավորող համակարգերի և կլիպսների, կյանքին վտանգ սպառնացող դեպքերում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ Արցախի Հանրապետությունում չիրականացվող վիրահատությունների, ցրված սկլերոզի բուժման նպատակով ձեռքերված դեղորայքի և չարորակ նորագոյացությունների՝ բուժման նպատակով ձեռք բերված դեղորայքի (հակաուռուցքային), արյան բաղադրիչների, ձայնալարի պրոթեզավորման, ռադիոդիստրիբուցիայի, պոզիտրոն-էմիսիոն տոմոգրաֆիայի անհրաժեշտ գումարի 50 տոկոսը, որը չպետք է գերազանցի 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գումարը,

գ. աչքի կեռատոպլաստիկայի, վնասվածքաբանական վիրահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաների անհրաժեշտ գումարի 50 տոկոսը, որը չպետք է գերազանցի 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ գումարը.

2) Արցախի Հանրապետությունում հաշվառված՝ կենսաթոշակի անցնելու կապակցությամբ պահեստ արձակված զինծառայողների,

Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և նրանց հավասարեցված ու Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցած անձանց սրտի վիրահատությունների, կորոնար անոթների ստենտավորման, աորտայի անևրիզմանների պատովածքների և շերտազատումների վիրահատությունների, սրտի ռիթմը վարող սարքի իմպլանտացիայի, կարդիոլերտեր-դեֆիբրիլատորի իմպլանտացիայի, աբլացիայի, Միներակի (Վ.Կավա/V.Cava) ֆիլտրի տեղադրման ու խոշոր հոդերի վիրահատության ժամանակ կիրառվող էնդոպրոթեզի անհրաժեշտ գումարի 100 տոկոսը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հուլիսի 20-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2020 թվականի սեպտեմբերի 21-ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՑԵՄԲԵՐԻ 24-Ի N 46Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 57-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը և 24-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի սեպտեմբերի 14-ի դիմումը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **ո ր ո շ ու մ է.**

1. Վեց ամիս ժամկետով երկարաձգել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 24-ի «Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ակունք» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 46Ա որոշմամբ «Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N 0007 լիցենզիայով ամրագրված վերակառուցման ժամանակահատվածը՝ որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում «2020 թվականի հոկտեմբերի 15-ը» բառերը փոխարինելով «2021 թվականի ապրիլի 15-ը» բառերով:

2. «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ «Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից N 0007 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Ակունք» փոքր հիդրոէլեկտրակայանի վերակառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ երկշաբաթյա

Ժամկետում, «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի դեկտեմբերի 18-ի N COD/2200 գրությամբ տրված բանկային երաշխիքով սահմանված 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի կեսը՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, փոխանցել Արցախի Հանրապետության պետական բյուջե (կենտրոնական գանձապետարան 915005242325):

3. «Ծովինար-Նարեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ մեկամսյա ժամկետում, Հանձնաժողով ներկայացնել 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի նոր երաշխիք՝ առնվազն մինչև 2021 թվականի մայիսի 30-ը գործողության ժամկետով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի սեպտեմբերի 22-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՄԻՐԶՈՑԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 21
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2020 թվականի սեպտեմբերի 21-ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅՏԵՐԵՐԻ 20-Ի N 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 58-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ և 24-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 37-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ՄԱՀՄԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի օգոստոսի 17-ի գրությունը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 20-ի ««ՄԱՀՄԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Մահման» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 57-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում, որոշման հավելվածի 3-րդ կետում և 3-րդ կետի 2-րդ ենթակետում «2033 թվականի հոկտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «2035 թվականի սեպտեմբերի 21-ը» բառերով.

2) որոշման 1-ին կետում և որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում «հուլիսի 5-ը» բառերը փոխարինել «սեպտեմբերի 21-ը» բառերով.

3) որոշման հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «Մահման» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 400 կիլովատտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

3) գեներատոր՝ 1 հատ, SFW400-6/850 մակնիշի, 2020 թվականի արտադրության, 400 կիլովատտ հզորությամբ.

4) հիդրոտուրբին՝ 1 հատ, HLA551C-WJ-50P մակնիշի, 2019 թվականի արտադրության, 274-552 կիլովատտ հզորությամբ:»:

2. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ «ՍԱՀՄԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N 0008 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի սեպտեմբերի 18-ի N 652-12308 գրությամբ տրված ՀԲԵՆ20/321-38 երաշխիքով սահմանված 927 500 (ինը հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի կեսը՝ 463 750 (չորս հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամը, փոխանցել Արցախի Հանրապետության պետական բյուջե (կենտրոնական գանձապետարան 915005242325):

3. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2020 թվականի սեպտեմբերի 18-ի N 652-12308 գրությամբ տրված ՀԲԵՆ20/321-38 երաշխիքով սահմանված 927 500 (ինը հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի մյուս կեսի՝ 463 750 (չորս հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումարի մասով Հանձնաժողովի առջև ստանձնած երաշխիքային պարտավորությունից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի սեպտեմբերի 22-ից:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 21
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

2020 թվականի սեպտեմբերի 7-ի

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՐՄԻ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ 2020-
2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՐՈՂԱԿԱՆ ՈՐՄԻ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ
ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐՄԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 116-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Համաձայն «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը և 8-րդ հոդվածի 8-րդ կետի՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝

1. Մահմանել Արցախի Հանրապետության տարածքում որսի կենդանիների 2020-2021 թվականների սիրողական որսի համար թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի աշխատակազմի ջրային, կենսառեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետին՝

1) կենդանական աշխարհի օգտագործման մասին պայմանագրերի կնքման գործընթացը կազմակերպելիս առաջնորդվել սույն հրամանի հավելվածում նշված չափաքանակներով,

2) սույն հրամանով սահմանված հավելվածում նշված կենդանիների որսը թույլատրել միայն շաբաթ և կիրակի օրերին:

3. 2020-2021 թվականների որսաշրջանի ընթացքում սույն հրամանի հավելվածում նշված կենդանիների որսի համար թույլտվություն ունեցող անձանց չի արգելվում իրականացնել մոխրագույն ագռավի, սովորական կաչաղակի, սովորական աղվեսի, գայլի և շնագայլի որս:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ֆ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 7
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՐՄԻ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ
2020-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՐՈՂԱԿԱՆ ՈՐՄԻ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ
ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐՄԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

1. Աղավնիներ (թխակապույտ և անտառային) - մինչև 2000 հատ, սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2020 թվականի նոյեմբերի 1-ը (տասը հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ/օրվա ընթացքում):

2. Տատրակ - մինչև 2000 հատ, սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից մինչև նոյեմբերի 1-ը (տասը հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ/օրվա ընթացքում):

3. Լոր - մինչև 4000 հատ, սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից մինչև նոյեմբերի 1-ը (տասը հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ/օրվա ընթացքում):

4. Քարակաքավ - մինչև 1000 հատ, 2020 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 27-ը (երեք հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ/օրվա ընթացքում):

5. Կոցարներ-(մորակոցար) (բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից) –մինչև 500 հատ, սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 27-ը (երեք հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ/օրվա ընթացքում):

6. Մարյակ (սովորա կան և վարդագույն) – մինչև 10000 հատ, սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 11-ը (տասը հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ/օրվա ընթացքում):

7. Ջրհովվիկներ (եղեգնահավ) - մինչև 500 հատ, սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2021 թվականի փետրվարի 15-ը (երկու հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ/օրվա ընթացքում):

8. Կռնչան և մոխրագույն բադեր- մինչև 2000 հատ, սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը (երկու հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ/օրվա ընթացքում):

9. Սև փարփար- մինչև 500 հատ, սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2021 թվականի փետրվարի 15-ը (երկու հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ/օրվա ընթացքում):

10. Նապաստակ - մինչև 100 հատ, 2020 թվականի նոյեմբերի 21-ից մինչև 2021 թվականի հունվարի 10-ը (մեկ հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ/օրվա ընթացքում):

11. Վայրի խոզ - մինչև 50 հատ, 2020 թվականի հոկտեմբերի 24-ից մինչև 2021 թվականի հունվարի 10-ը (մեկ հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ/օրվա ընթացքում):